ընթացքում միշտ երգում էր, ծիծաղում էր, կատակներ էր անում, իր վրայ էր դարձրել ամբողջ քարաւանի ուշադրութիւնը:

Կային եւ մէկ խումբ վանեցի մշակներ, որոնք մերձակայ գիւղորայքից էին: Դրանք պանդխտութիւնից էին վերադառնում: Որքա՜ն հեռու տեղից էին գալիս եւ որքա՜ն ժամանակ բացակայ էին հայրենիքից, այդ երեւում էր նրանց թախծալի դէմքերից: Բայց որքան մօտենում էին հայրենի տնակին, այնքան նրանց դէմքերը հետզհետէ զուարթանում էին: Նրանցից եւ ոչ մէկը գրաստ չունէր: Մի-մի պարկ ուսներին կապած, ուղեւորի երկար ցուպը ձեռներին, այրուած, սեւացած արեւի բոցերից, գնում էին ոտով:

Թափառական չինգանէ՞, թափառական վանեցի՞: Երկուսի մէջ սերտ համեմատութիւն կայ: Զանազանութիւնը նրանումն է միայն, որ մէկը հայրենիք, տուն ու տեղ չունի, այլ, որպէս աշխարհաքաղաքացի, թափառում է ամբողջ աշխարհում: Իսկ միւսը ամէն ինչ ունի՝ եւ հայրենիք, ե՛ւ ընտանիք, ե՛ւ հայրենական տուն ու տեղ, բայց դարձեալ թափառում է եւ օտար երկրներում հաց է որոնում:

Քարաւան-բաշին (քարաւանի պետը) ազգով հայ էր, յայտնի Թոխմախ-Արթինը, որը, բնիկ արզրումցի լինելով, սովորութիւն ունէր ամէն խօսքի մէջ կրկնել այդ առածը՝ «Մինչեւ չպղտորոի, չի պարզոի»: Նա առանց պատճառի չէր ստացել իր թոխմախ մականունը, որ նշանակում է երկաթեայ մեծ կռան, որով դարբինները երկաթ են կռում ու կոփում: Միջին հասակով մարդ էր Արթինը, ամրակազմ, որպէս ծառի բուն: Նրա խոշոր դէմքի վրայ մազերից ազատ մնացել էր միայն քիթը եւ ճակատի մի փոքրիկ մասը: Մինչեւ անգամ ականջները ծածկուած էին խիտ ու կոշտ մազերով: Նա սովորութիւն ունէր ինքն իրան ծաղրել, ասելով, թէ մայրը իրան գողացել է արջերի որջից: Բայց երբ խօսում էիր այդ կոշտ ու կոպիտ մարդու հետ, նրա դէմքի խոշոր գծերը մեղմանում էին եւ կարծես հետզհետէ գեղեցկանում էր նա: Այն խիստ եւ կարծր կեղեւի մէջ կար ազնիւ սիրտ, կային եւ ազնիւ զգացմունքներ: Նստած մի սեւ նժոյգի վրայ, հրացանը ուսին, ատրճանակները թամքի ղաշին կապած, թուրը գօտիից քարշ ընկած, նա կայծակի արագութեամբ մի րոպէ քարաւանի առջեւումն էր, մեօայ րոպէ՝ նրա ետեւումը: Ճանապարհների եւ անցքերի բոլոր վտանգաւոր տեղերը գիտէր նա: Երբ այսպիսի տեղերի էր հասնում, բաժանւում էր քարաւանից, հեռանում էր, բարձրանում էր բլուրների վրայ, դիտելու՝ արդեօք ճանապարհը ազա՞տ էր աւազակներից, թէ փակել էին անցքը:

Թոխմախ-արթինը մօտ յիսուն տարեկան կը լինէր, բայց դեռ պահպանել էր իր երիտասարդական աշխոյժն ու կայտառութիւնը: Քսան տարիից